ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

«4» մայիսի 2011 թ.
թիվ 74

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի ապրիլ ամսվա ընթացքում ընդունած որոշումները: Կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր 2 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 4879-11
«06» 05 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«27» ապրիլի 2011 թվական

ՈՐՈՇՈՒՄ N 9Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի ԹԻՎ 8Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 01/07/1162-11 գրությունը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հնարապետության Արմավիրի մարզի Գայի համայնքի ղեկավարի 2010 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը հաստատելու մասին» N 8 Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1)Որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2011 թվական մայիսի 4-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 26 » ապրիլի 2011 թվականի

Որոշում N 8

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101 հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի բնակիչ Կարապետ Նորայրի Մաղաքյանի 2011 թվականի ապրիլի 15-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի բնակիչ Կարապետ Նորայրի Մաղաքյանի հետ 2010 թվականի մայիսի 26-ին կնքված հողամասի (ջրային) տարածքի վարձակալության պայմանագիրը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական մայիսի 4-ին

գ. Գայ